ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 926-Ա/Ք — 18.09.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի 260-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, «ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ» ԵՎ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 31-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 6-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 4-ի՝ <<Հանրակրաթական ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին տրվող տեղեկանքը հաստատելու մասին>> N 260 Ա/Ք հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:

2.Հաստատել «Ուսուցչի մասնագիտական գործունեության ընդհանրական գնահատման չափանիշների ձևաթուղթը» և հարցաթերթերը՝ համաձայն Հավելված 2-ի:

/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Հավելված 1
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2014 թվականի սեպտեմբերի 18 -ի N 926 *-Ա/Ք հրամանի*
<<Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2012 թվականի ապրիլի 4-ի N 260-Ա/Ք հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՍԻՆ

1. Ուսուցչի անունը, ազգանունը, հայրանունը----------
2. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը----------
3. Տեղեկություններ կրթության վերաբերյալ (ինչ ուսումնական հաստատություն է ավարտել, մասնագիտությունը, որակավորումը. լրացնել, ինչպես լրացված է դիպլոմում)----------
   ----
   ----
4. Ուսումնական հաստատության անվանումը, որտեղ աշխատում է տվյալ պահին----------
   ----
5. Դասավանդած առարկան----------
6. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման որ աստիճանի տարակարգ ստանալու համար են ներկայացվում փաստաթղթերը----------
   ----
7. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգ ստանալու համար ներկայացվող բնութագրիչները (նշել առանձին-առանձին)

1)----------
2)----------
3)----------
4)----------
5)----------
6)----------
7)----------

Տնօրենի ստորագրություն

Կ.Տ.>>:

Հավելված 2
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 926-Ա/Ք հրամանի

«Ուսուցչի մասնագիտական գործունեության ընդհանրական գնահատման չափանիշների ձևաթուղթ» (Ձև 1)					
Գործունեության ընդհանրական չափանիշները		**Կատարողականի մակարդակը**			
		գերա-զանց 5 միավ.	**լավ 4 միավոր**	**բավարար 3 միավոր**	**անբա-վարար 2 միավոր**
1	Դասի պլանավորման, նախապատրաստման և նպատակների ձևակերպման կարողությունը				
2	Դասարանի կառավարումը և ուսման համար անհրաժեշտ մթնոլորտի և դրդապատճառների ստեղծման և պահպանման կարողությունը				
3	Սովորողների ուսումնառության գործընթացի կազմակերպման կարողությունը				
4	Սովորողների անհատական առանձնահատկություն-ների և կարողությունների ճանաչումը և անհատականացված մոտեցումների կիրառման արդյունավետությունը				
5	Առարկայական բազմագիտակությունը (էրուդիցիան)				
6	Ուսումնական նյութի ներկայացումն ու յուրացումը ապահովելու ուսուցչի մեթոդական կարողությունը				
7	Հաղորդակցման կարողությունները: ՏՀՏ կիրառման արդյունավետությունը				
8	Սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատման կարողությունը: Գնահատման զանազան ձևերի և տեսակների օգտագործումը				
9	Սեփական մասնագիտական գործունեությունը վերլուծելու (ռեֆլեքսիա) և զարգանալու կարողությունը				
40-45 միավորը՝ գերազանց, 31-39-ը՝ լավ, 23-30-ը՝ բավարար, մինչև 22-ը՝ անբավարար					

Տնօրենի ստորագրություն

Կ.Տ.

Գործընկերոջ հարցաթերթ (Ձև 2) **Հարգելի գործընկեր, խնդրում ենք արտահայտել Ձեր կարծիքը ուսուցչի մասին**				
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը				
Դասավանդած առարկան				
Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր դատողություն և նշում կատարեք այն սյունակում, որն առավել ճշտությամբ է արտահայտում Ձեր կարծիքը:				
Բնութագրիչներ	0 համա- ձայն չեմ	1 մասամբ համա- ձայն եմ	2 հիմն. համա- ձայն եմ	3 լիովին համա- ձայն եմ
1. Նա վայելում է ծնողների և սովորողների, գործընկերների հարգանքը				
2. Նա հետաքրքրվում է մասնագիտական նորություններով և մշտապես թարմացնում է իր գիտելիքները				
3. Նա տիրապետում է մանկավարժական նոր մեթոդների				
4. Նա պարտաճանաչ է և պահանջկոտ իր աշխատանքի հանդեպ				
5. Նա բազմակողմանի զարգացած և բարեկիրթ մարդ է				
6. Նա հաճախ է հանդես գալիս հետաքրքիր նախաձեռնություններով				
7. Նա կարողանում է բացահայտել սովորողների ընդունակությունները և զարգացնել նրանց կարողություններն ու հմտությունները				
8. Նրա գնահատականները օբյեկտիվ են				
9. Եթե ես որևէ մեկի հետ խորհրդակցելու կարիք զգամ, կդիմեմ նրան:				
10. Նա լավ գիտի իր առարկան և պատրաստ է աջակցել գործընկերներին				
11. Երբ դպրոցում դասերից դուրս որևէ հանրօգուտ աշխատանք է հարկավոր անել, նա սովորաբար չի խուսափում				
12. Նա լավ է կարողանում կառավարել դասարանը				
30-36 միավորը՝ գերազանց, 20-29-ը՝ լավ, 10-19-ը՝ բավարար, 0-9-ը՝ անբավարար				

Տնօրենի ստորագրություն

Կ.Տ.

***Գնահատմանը մասնակցում են գործընկերների առնվազն 50 տոկոսը:**

Սովորողի հարցաթերթ (Ձև 3)				
Սիրելի սովորող, խնդրում ենք արտահայտել Ձեր կարծիքը ուսուցչի մասին				
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը				
Դասավանդած առարկան				
Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր դատողություն և նշում կատարեք այն սյունակում, որն առավել ճշտությամբ է արտահայտում Ձեր կարծիքը:				
Բնութագրիչներ	0 համա-ձայն չեմ	1 մասամբ համա-ձայն եմ	2 Հիմնա-կանում համա-ձայն եմ	3 լիովին համա-ձայն եմ
1. Նա պարզ ու մատչելի է բացատրում նոր դասը				
2. Նա բարի է և ներողամիտ				
3. Ես հարգում եմ նրան և համարում օրինակելի մարդ				
4. Նրա դասերին ակտիվորեն մասնակցում է գրեթե ամբողջ դասարանը				
5. Նրա դասերն այնքան հետաքրքիր են անցնում, որ չեմ զգում ժամանակը				
6. Գնահատելիս նա անաչառ է և արդարամիտ				
7. Նա չի վիրավորում և չի կոպտում մեզ				
8. Ես վստահում եմ նրան և կարող եմ ինձ հուզող հարցերը քննարկել նրա հետ				
9. Երբ նա լրացուցիչ ուսումնական հանձնարարություն է տալիս, ես սիրով կատարում եմ				
10. Նա կարողանում է կառավարել դասարանը				
11. Նրա դասավանդած առարկան հիմնականում յուրացնում ենք դասարանում				
12. Նա լսում է մեր կարծիքը				
13. Ես նրա դասին ինձ լավ եմ զգում, չեմ լարվում, չեմ անհանգստանում				
14. Եթե ինչ-որ հարցում համաձայն չլինեմ նրա հետ, հանգիստ կարող եմ ասել այդ մասին				
15. Նա հաճախ է խրախուսում մեր նախաձեռնությունները և մտահղացումները				
38-45 միավորը՝ գերազանց, 25-37-ը՝ լավ, 12-24-ը՝ բավարար, 0-11-ը՝ անբավարար				

Տնօրենի ստորագրություն

Կ.Տ.

Գնահատմանը մասնակցում են սովորողների առնվազն 50 տոկոսը:

Ծնողի հարցաթերթ (Ձև 4)				
Հարգելի ծնող, խնդրում ենք արտահայտել Ձեր կարծիքը ուսուցչի մասին				
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը				
Դասավանդած առարկան				
Ուշադիր կարդացեք յուրաքանչյուր դատողություն և նշում կատարեք այն սյունակում, որն առավել ճշտությամբ է արտահայտում Ձեր կարծիքը:				
Բնութագրիչներ	0 համաձայն չեմ	1 մասամբ համաձայն եմ	2 հիմնա-կանում համաձայն եմ	3 լիովին համաձայն եմ
1. Երեխաս հաճույքով է մասնակցում նրա դասերին				
2. Երեխաս նրա հանձնարարած տնային աշխատանքները հիմնականում ինքնուրույն է կատարում				
3. Երեխաս հետաքրքրված է նրա առարկայով				
4. Նա բարի է և ներողամիտ				
5. Երեխաս հարգանքով է խոսում նրա մասին				
6. Իմ երեխայի կրթության և դաստիարակության հարցում պատրաստ եմ խորհրդակցել նրա հետ				
7. Նա բարեկիրթ է և բանիմաց				
8. Նա կարողնում է ծնողներին ոգևորել՝ իրենց երեխաների ձեռքբերումներն ու արժանիքները մատնանշելով				
9. Նա կարողանում է բացահայտել երեխաների ընդունակությունները և զարգացնել նրանց կարողություններն ու հմտությունները				
11. Սովորողներին գնահատելիս նա անաչառ է և արդարամիտ				
12. Ես վստահ եմ, որ նրա առարկայից երեխաս կայուն գիտելիքներ է ստանում				
30-36 միավորը՝ գերազանց, 20-29-ը՝ լավ, 10-19-ը՝ բավարար, 0-9-ը՝ անբավարար				

Տնօրենի ստորագրություն

Կ.Տ.

***Գնահատմանը մասնակցում են ծնողների առնվազն 50 տոկոսը:**

Ուսուցչի ինքնագնահատման հարցաթերթ (Ձև 5)				
Հարգելի ուսուցիչ, խնդրում ենք պատասխանել Ձեր անձին և մասնագիտական գործունեությանը վերաբերող հետևյալ հարցապնդումերին: ***Ուշադիր կարդացեք դրանցից յուրաքանչյուրը և նշում կատարեք այն սյունակում, որն առավել ճշտությամբ է արտահայտում Ձեր կարծիքը***				
Ձեր ազգանունը, անունը, հայրանունը				
Դասավանդած առարկան				
1.Ես մշտապես թարմացնում եմ իմ գիտելիքները	0-Համաձայն չեմ	1-Մասամբ համաձայն եմ	2-Հիմնականում համաձայն եմ	3-Լիովին համաձայն եմ
2. Ես տիրապետում եմ մանկավարժական նոր մեթոդներին				
3. Ես հաշվի եմ առնում սովորողների անհատական առանձնահատկությունները				
4. Ես լավ եմ տիրապետում իմ առարկային				
5. Ես հաշվի եմ առնում գործընկերներիս խորհուրդները				
6.Գործընկերներս հաշվի են առնում իմ խորհուրդները				
7.Ես պատրաստակամությամբ օգնում եմ նրանց, ովքեր դրա կարիքն ունեն				
8.Ես կարողանում եմ բացահայտել սովորողների ընդունակությունները, զարգացնել նրանց կարողություններն ու հմտությունները				
9.Ես հանգամանորեն նախապատրաստվում, պլանավորում եմ իմ աշխատանքը				
10.Ես հաճախ եմ հանդես գալիս հետաքրքիր նախաձեռնություններով				
11.Ես վայելում եմ սովորողների և ծնողների հարգանքը				
12.Սովորողները Ձեզ վստահում են և իրենց հուզող հարցերը քննարկում են Ձեզ հետ				
13. Սովորողների նկատմամբ Ձեր մասնագիտական մոտեցումները հենվում են նրանց անհատականության և կարողությունների ճանաչման վրա				
14.Դուք խրախուսում եք սովորողների ինքնուրույն նախաձեռնություններն ու մտահղացումները				
15.Դուք կարողանում եք Ձեր անցկացրած դասերի ընթացքն ու արդյունքները բազմակողմանիորեն վերլուծել և համարժեք գնահատել				
38-45 միավորը՝ գերազանց, 25-37-ը՝ լավ, 12-24-ը՝ բավարար, 0-11-ը՝ անբավարար				